ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ
2016 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……3

ԲԱԺԻՆ 1.

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները……4

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը……4

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……5

ԲԱԺԻՆ 2.

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……6

2.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սարքավորումների վերազինմանն ուղղված ներդրումներ……6

2.2 Հիդրոէլեկտրակայանների հիմնանորոգմանն և վերազինմանն ուղղված ներդրումներ……6

ԲԱԺԻՆ 3.

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……7

Հղումներ օգտագործված նյութերին……9

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №399Լ որոշումով հաստատված 2017 թվականի աշխատանքային ծրագրի 20-րդ կետի և արտացոլում է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ընկերության 2016-2017 թվականների ներդրումային ծրագրի 2016 թվականի հատվածի և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2016-2017 թվականների ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) [Որոշում] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2016-2017 թվականների Ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր իրականացնել հիդրոէլեկտրակայանների հիմնանորոգում և վերազինում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սարքավորումների վերազինում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և չափիչ սարքերի ձեռքբերում: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 98,1 մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը նախատեսված էր հիդրոէլեկտրակայանների հիմնանորոգման և վերազինման աշխատանքների ուղղությամբ՝ 75,7 մլն դրամ, իսկ 10,4 մլն դրամը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սարքավորումների վերազինման ուղղությամբ:

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 2016 թվականին իրականացված ներդրումների մասով

Համաձայն Ընկերության փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ 2016 թվականի ընթացքում իրականացվել են 65,1 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 46,2 մլն դրամի ներդրումները:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2016-2017 թվականների ներդրումների կանխատեսվող ծավալը		2016 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրում-ային ծրագրի կատարման ցուցանիշը, 2016թ
		հազար դրամ	%	հազար դրամ	%	%
1	SS ոլորտի սարքավորումների վերազինում	10 400.0	10.6%	971.9	2.1%	9.3%
2	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	7 000.0	7.1%	-	-	-
3	Չափիչ սարքերի ձեռքբերում	5 000.0	5.1%	-	-	-
4	Հիդրոէլեկտրակայանների հիմնանորոգում և վերազինում	75 704.3	77.2%	45 261.3	97.9%	59.8%
5	**Ընդամենը**	**98 104.3**	**100%**	**46 233.2**	**100%**	**47.1%**

Համաձայն Հաշվետվության, 2016 թվականի ընթացքում ընկերությունն աշխատանքներ է իրականացրել հիդրոէլեկտրակայանների հիմնանորոգման և վերազինման, ինչպես նաև SS ոլորտի սարքավորումների վերազինմանն ուղղություններով: Մնացած ուղղություններով 2016 թվականի ընթացքում ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները շահագործման չեն հանձնվել:

Արդյունքում 2016 թվականի ընթացքում Ընկերությունն իրականացրել է Ներդրումային ծրագրի 47%-ը:

ԲԱԺԻՆ 2.

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

2.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սարքավորումների վերազինմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 10,4 մլն դրամի ներդրումներ՝ Երևան քաղաքի գրասնյակի սերվերի համար անխափան սնուցման սարքի ձեռքբերման և Տաթև, Շամբ և Սպանդարյան հիդրոէլեկտրակայաններում կապի համակարգերի փոխարինման նպատակով:

Երևան քաղաքի գրասենյակի սերվերի համար անխափան սնուցման սարքի ձեռքբերման ենթաուղղությամբ նախատեսված էր 1,4 մլն դրամով ձեռք բերել անխափան սնուցման սարք: Համաձայն Ընկերության կողմից ներկայացրած 2016 թվականի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ սարքի ձեռքբերումն իրականացվել է 1,0 մլն դրամով:

Հիդրոէլեկտրակայաններում կապի համակարգերի փոխարինման ենթաուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել:

2.2 Հիդրոէլեկտրակայանների հիմնանորոգմանն և վերազինմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ նախատեսված էր 47,1 մլն դրամի ներդրումներ ուղղել Սպանդարյան հիդրոէլեկտրակայանի ճնշման համակարգի փոխարինմանը: Համաձայն Ընկերության կողմից ներկայացրած 2016 թվականի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ նշված աշխատանքները իրականացվել են 45,3 մլն դրամով:

Տաթև, Շամբ, Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների կամրջակային կռունկների վերազինման նախագծային աշխատանքների ենթաուղղությամբ նախատեսված 19,0 մլն դրամի նախագծային աշխատանքներն իրականացվել են 18,9 մլն դրամով, սակայն շահագործման չեն հանձնվել:

Տաթև, Շամբ, Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների համար շարժական յուղի մաքրման կայանների ձեռքբերում ենթաուղղությամբ հաշվետու տարում ներդրումներ չեն իրականացվել:

ԲԱԺԻՆ 3.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները Ընկերության կողմից 2016 թվականին իրականացված և շահագործման հանձնված ներդրումներն ամբողջությամբ իրականացվել են Ներդրումային ծրագրով համաձայնեցված ուղղությունների և ծավալների շրջանակում, ուստի 2016 թվականին իրականացված ավարտված 46,2 մլն դրամ ներդրումներն ամբողջ ծավալով հաշվի կառնվեն ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Ստորև՝ աղյուսակ 2-ում ներկայացված է Ընկերության կողմից 2016 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

1	2016 թվականի ներդրումային ծրագրով հաստատված ներդրումների ընդհանուր ծավալը	**98.10**
2	2016 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը	**46.23**
3	**2016 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**46.23**

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի №415Ա որոշումը «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2016-2017 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Հաշվետվություն - «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին Ընկերության 2017 թվականի մայիսի 5-ի №0042_2017 գրությամբ ներկայացված հաշվետվություն